ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

Սահմանափակումները արտաքին առևտրի ոլորտում

Հոդված 2.1.

1. Սույն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված արտաքին առևտրի ոլորտում սահմանափակումների ենթակա ապրանքներ արտահանելու և (կամ) ներմուծելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած լիազոր մարմնի կողմից տրվում են արտաքին առևտրային նպատակով ապրանքներ արտահանելու և (կամ) ներմուծելու լիցենզիաներ կամ թույլտվություններ կամ հավաստագրեր:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում ապրանքներ արտահանելու և (կամ) ներմուծելու համար կարող է տրվել մեկանգամյա, գլխավոր կամ բացառիկ լիցենզիա:

3. Սույն հոդվածով նախատեսված լիցենզիաների, թույլտվությունների և հավաստագրերի տրամադրման համար գանձվում է պետական տուրք՝ օրենքով նախատեսված կարգով և չափով:

4. Արտաքին առևտրային նպատակով ապրանքներ արտահանելու և (կամ) ներմուծելու լիցենզիաների, թույլտվությունների և հավաստագրերի տրամադրման կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական մարմինը:

5.

Հոդված 2.2. Հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկները իրականացնելու դեպքերում ներկայացվող պահանջները

1. Նախորդ հարկային տարվա ընթացքում 24 միլիոն դրամի շեմը գերազանցող իրացման շրջանառություն ունեցող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը օրենքով նախատեսված հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր լինելու դեպքերում ապահովում են վաճառված ապրանքի կամ մատուցված ծառայության գումարը ստանալու, ստացված գումարը հսկիչ դրամարկղային մեքենա մուտքագրելու և հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնը տրամադրելու գործողությունների տեսաձայնագրման գործընթացի իրականացումը: